ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 25-7700

« 07 » հոկտեմբերի 2025թ.

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ՍԱՖԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Սմբատ Զորավարի 11/3)

Հարգելի՛ պարոն Սաֆարյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

28-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժինների մասով eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝

- 28-րդ չափաբաժնով նախատեսված՝ A5 ձևաչափի նամակի ծրարի մասով հրավերով սահմանված է՝ «չափսերը՝ 176 x 250մմ (շեղումը +- 2%)», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «չափսերը՝ 178 x 254մմ (շեղումը +- 2%)», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին: Այսինքն՝ հրավերով +- 2% շեղումը նախատեսված է A5 ձևաչափի նամակի ծրարի հրավերով սահմանված չափսերի նկատմամբ, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ներկայացվել է +- 2% շեղում՝ հիշյալ ծրարի մասնակցի կողմից առաջարկվող չափսերի նկատմամբ,
- 29-րդ չափաբաժնով նախատեսված՝ A4 ձևաչափի նամակի ծրարի մասով հրավերով սահմանված է՝ «չափսերը՝ 220 x 325մմ (շեղում +- 2%)», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «չափսերը՝ 229 x 324մմ (շեղում +- 2%)», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող A4 ձևաչափի նամակի ծրարի 229մմ չափսը գերազանցում է հրավերով սահմանված (թույլատրելի) շեղման տոկոսը, ինչպես նաև հրավերով +- 2% շեղումը նախատեսված է A4 ձևաչափի նամակի ծրարի

հրավերով սահմանված չափերի նկատմամբ, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ներկայացվել է +- 2% շեղում՝ հիշյալ ծրարի մասնակցի կողմից առաջարկվող չափերի նկատմամբ,

- 30-րդ չափաբաժնով նախատեսված՝ A3 ձևաչափի նամակի ծրարի մասով հրավերով սահմանված է՝ «Ծրար՝ 306 x 408մմ (շեղում +- 2%) չափսերով», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «Ծրար՝ 305 x 405մմ (շեղում +- 2%) չափսերով», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին: Այսինքն՝ հրավերով +- 2% շեղումը նախատեսված է A3 ձևաչափի նամակի ծրարի հրավերով սահմանված չափերի նկատմամբ, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ներկայացվել է +- 2% շեղում՝ հիշյալ ծրարի մասնակցի կողմից առաջարկվող չափերի նկատմամբ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հոկտեմբերի 08-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/18» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788